

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՀՈԳԵԼՈՒՅՍ Տ. ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԳԻՐԸ Տ. ԳԵՎՈՐԳ Ե ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՅ Ե.
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻՆ ՄԵՐՈՅ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի. Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Որդիական ակնածանօք և համբուրիւ Ս. Աջոյն.

Վեհափառ Տէր հոգևոր,

Սրբատառ կոնդակ Հօրդ հանուրց Հայաստանեայցս, թուագրեալն ի 1 Յունուարի այսր ամի, որ առբերէր մեզ վաւերիս նորոգ հաստատութեան Գերագոյն Հոգևոր Խորհրդոյ Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի՝ ըստ ոգւոյ և օրինաց Սրբոյ Եկեղեցւոյս մերոյ, անագան ուրեմն հասեալ ի ձեռս մեր 19 Փետրուարի, տուաք ընթեռնուլ վնա նախ յատենի թեմական ժողովոյ վիճակիս, և ապա ի տաճարի Ս. Աստուածածին եկեղեցւոյ քաղաքիս յունկն ամենայն հաւատացելոց ժողովելոց ի նմին՝ յերեկոյի Ծաղկազարդի Կիւրակէին:

Մեք և որք ընդ մեզ են՝ եղբարք, պաշտօնեայք և ժողովուրդ ուխտի Առաքելական Սրբոյ Եկեղեցւոյս, ամենեքեան շնորհ ունիմք վԱստուծոյ Ամենակալէն, վի՛ ընդ ապատութեան Հայրենեաց մերոց պարգևեաց մեզ և վապատութիւն

Եկեղեցւոյ, որպէսզի տացի մեզ յայսմհետէ վարիչ բնիկ օրինօք և կանոնիւք ազգի մերոյ և կրօնի, որպէս սահմանադրեցին ի դարս անցեալ ժամանակաց Հայրապետք և Հարք, Առաջնորդք և Վարդապետք Սրբոյ Հաւատոյս, և որպէս արժան համարեսցին տնօրինել Գլուխդ Սրբոյ Եկեղեցւոյս մերոյ և ժողովք ուխտի նորին, ըստ պահանջելոյ ժողովրդեան մերոյ:

Ակն ունիմք կի ի շնորհս ջանից Վեհիդ մի յապաղեսցի և գումարումն ընդհանրական ժողովոյ, որ վերստին կանգնեալ ուղղեսցէ զցանկ հայրենի աւանդից և հաստատեսցէ զշինուած օրինաց Հայաստանեայց սուրբ և ուղղափառ Եկեղեցւոյ, ընդ հովանեաւ մեծի և պատուական Հայրապետիդ մերոյ:

Հայցելով զօրհնութիւն Հօրդ Սրբոյ ի վերայ ամենայն որդւոց քոց հարազատից, ժողովրդեան Հայոց, որք յիմում վիճակի աստ են, և յիմ իսկ, մնամ

ի շնորհաց Տեառն մերոյ և Փրկչին և ըստ

հաճութեան Սրբական Հայրապետիդ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ԵԳԻՊՏՈՍԻ
ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱԿԱԴԵՄԻԱ